

Եկեղեցական կեանքը բաղմադիմի արտայայտութիւններ ունի, իւրաքանչիւր կենդրոնում և իւրաքանչիւր յետ ընկած գիւղում կատարուում են աչքի ընկնող երեւոյթներ, որոնց ընդհանուրին ծանօթացնելը անհրաժեշտ պահանջ է և աղբիւր շատ տեսակ արգասաւոր գործերի, Հայ պատրիարքութիւններն, առաջնորդութիւնները և վանահայրութիւններն այն կենդրոններն են, ուր կատարուում են և պիտի կատարուին ընդհանուրի յառաջադիմութեան նպատող գործեր, ահա այդ գործերին և դրանց հեղինակ եկեղեցականներին ու աշխարհականներին պիտի ծանաչէ հայ ժողովուրդը «Արարատ»-ի շնորհիւ: Ոչ այսչափը միայն, շատ են այն ուրախառիթ և տխրադեցիկ երեւոյթները, որ կատարուում են խուլ անկիւններում, մոռացուած հայ գիւղերում, ահա այդ ամէնի մասին պէտք է զեկուցումն տայ «Արարատ»-ը: Այլ թերթերը այդ նպատակով թղթակիցներ են պահպանում, իսկ «Արարատ»-ի ի պաշտօնէ թղթակից է ամէն մի քահանայ, վարդապետ և առաջնորդ և ուսուցիչ, որոնց ուղղակի պարտքն է ծանօթացնել ընդհանուրութեան իրենց յանձնուած հօտի եկեղեցու, վանքի, վիճակի և դպրոցի հետ:

Չենք կամենում առանձնապէս յիշել, որ այդ տեսակ զեկուցումներն բացի հասարակական օգտից և մասնաւոր ու անձնական օգուտներ առաջ կը բերեն մեր եկեղեցականների համար, որոնց գործերը կը փայլին իսկական լուսով և շին վարագուրուել:

Այս հրաւերն ուղղում ենք մենք մանաւանդ մեր հեռաւոր եղբայրակիցներին, ծածկատանի և Պարսկաստանի հողերականութեան, որոնց աջակցութեանն առանձնապէս կարօտ է խմբագրութիւնս: Այսօր ամէն մի հայ ծարաւի է իւր եղբայրակիցների վիճակի ճշմարիտ ծանօթութեան, տանք ուրեմն այդ ծանօթութիւնն, որպէս զի կատարած լինինք մեր պարտքը և ծառայած Հայաստանայց եկեղեցու բարգաւաճման գործին:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ.

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ .
Գ. Ճ Ե Մ Ա Ր Ա Ն .

Դէորդեան Ճեմարանի վարչութիւնը ըստացել է հետևեալ զրութիւնը Սիմֆերոպոլի նահանգական դատարանի դատախազից, 1895 Վիտոր. 24: Ա 1936.

Պերեկոպ քաղաքի վաճառական Ղաղար Յակոբեան Բերքերեանի կտակից, որ հաստատուել է Սիմֆերոպոլի նահանգական դատարանը 1894 թ.

զեկտեմբերի 13-ին, երևում է որ հանգուցեալ Բերքերեանն ի միջի այլոց կտակել է.

« 11) Բերքերեանի անուան մի թոշակ սահմանելու էջմիածնի հողերը դպրանոցում Թէոդոսիայի կամ Ցաւրիկեան նահանգի միւս քաղաքներից մէկի մի հայ տղայի համար երկու հարիւր յիսուական ուսուցի տարեկան, և եթէ Բերքերեան անուան թոշակաւորներն իրանց ուսումն աւարտելուց յետոյ քահանայ ձեռնադրուին՝ տալ իւրաքանչիւրին սկզբնական պիտոյքներն հոգալու համար հարիւրական ուսուցի»:

Յայտնելով այս մասին Հողեր Պարանոցից, պատիւ ունիմ աւելացնելու, որ այս կտակի համար նշանակուած կտակահատարներն ապրում են—Տիտուլիարնի սովեանիկ Սիրաֆիմ Միսիրովը Սիմֆերոպոլ քաղաքում իսկ Մարտին Գրիգորեիչ Զայցելի, Կարպ Խրիստոֆորովիչ Կարակաչը, Իւան Կարպովիչ Սելինովը, Օսիպ Օսիպովիչ Ալթունջին և Եգոր Ալադիմիրովիչ Չեմբերջին— Թէոդոսիայում:

Ա. ԲՈՒՍԱՀԱՅՔ.

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ԳՊՐՈՏԵՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ.

Մեր դպրոցների կեանքին փոքր իշատէ ծանօթ մարդկանց համար պարզ է՝ թէ ինչ բաղմադիմի արդեւքներ կան այդ դպրոցների յառաջադիմութեան և նոցա գործունէութեան կանոնաւոր ընթացքի դէմ: Համոզուած լինելով որ վէճքը բուժելու համար պէտք չէ խնայել բանալու այն, մենք կաշխատենք ունեցած ճիշդ տեղեկութիւններից քաղելով ներկայացնել այժմ Երևանի ընդարձակ թեմի ծխ. դպրոցների ներքին կեանքի պատկերը, Սկսում ենք տնտեսական վիճակից:

Գպրոցական կեանքում ամենամեծ խնդիրներից մէկը, գուցէ և առաջինը, տնտեսական վիճակն է: Գպրոցական եկամտի պակասութիւնը այն մաշող հիւանդութիւնն է, որ չի թողնում դպրոցն աճի ու զօրանայ: Մինչև 1894 թուականը դպրոցների եկամուտներն էին եկեղեցական դրամների օժանդակութիւն, եկեղեցու հողերից ստացուող նրպաստ, աշակերտական թոշակ, հասարակական վրձիոներով կազմուած եկամուտներ. ինչպէս կը շոքրից, վաճառուող անասուններից, խանութներից պարտադիր վճար ևլն. ևլն: Իսկ թուականից այդ աղբիւրները ցամաքեցան և դպրոցները մնացին եկեղեցու օգնութեան, թոշակների և կամաւոր նուէրների յուսով: Գոցանից առաջինը իրաւամբ Եկեղ-ձխակ. դպրոցների անդրանիկ աղբիւրը պիտի

լինի. բայց ի՞նչ վիճակի մէջ են եկեղեցական եկամուտները:

Գարոցները նախահաշիւներն ստանալիս և դրպրոցներին այցելելիս միշտ մեր թեմական տեսուչներին աչքին է ընկնում ժողովրդի մի պահանջ. եկեղեցական արդիւնքներն ապահովելու պահանջը: Թէպէտև նոցա բուն պարտքն է գարոցների մտաւոր և բարոյական յառաջագիմութեանը հոգ տանել, որ դուռ տեսչական պարտականութիւն է: սակայն տեղի տալով ժողովրդի բողոքներին ու թախանձանքներին թեմական տեսուչները ստիպուած են լինում շատ անբուն գիշերներ անցնել եկեղեցական հաշիւները տեսնելով: Չկայ եկեղեցի առանց որ և է գումարի. բայց բոլոր գումարներն էլ նոյն անփութութեան մատնուած: նոյն անօգուտ վիճակի մէջ են: եկեղեցու դրամները պահուում են երեցփոխների ձեռքում: Թէպէտև ելից և մտից տուժար է տալիս նոցա կոնսիստորիան (ոմանց էլ կամ չի տալիս կամ գործակալները չեն հասցնում): բայց և այնպէս նոցա անգրագետ և անհոգ լինելու պատճառով բոլոր եկամուտը չի արձանագրուում: Եթէ դէպք լինի հաշիւ պահանջելու: երեցփոխները կրնան արկայացնեն այնքան, որքան իրենք կամենում են: այսինքն՝ որ մուտքն ու ծախքը հաւասար լինին և միմեանց ջնջն և կամ դեռ եկեղեցին երեցփոխին պարտական մնայ: Հաշիւ ստացողները (եթէ պատահում է հաշուետեսութիւն) լինում են գործակալները: որոնք, մեծ մասով, երեցփոխներից բարձր չեն... Մի օրինակ յառաջ բերենք թեմական տեսչի մի պատմութիւնից. «Դէպք եղաւ մեզ Գաղալու գիւղի եկեղեցու եկամուտներն աչքէ անցնել. երեցփոխը չունէր ելից ու մտից ժապախեալ մատեան. մի փոքրիկ հնադարեան և ժառանգական հաշուեմատեանի մէջ նշանակել էր իւր հաշիւները: Հաշուեմատեանից պարզ երևում էր որ հոգեվախ երեցփոխը աշխատել էր չեղած ծախքեր փաթթել եկեղեցուն: որպէս զի մուտքից չաւելանայ. օր. «Նա պնդում էր որ 29 դրուանքայ մտից 10-ը միայն սեղանումն է վառուել. երբ տեսաւ թէ այս հաշուով էլ չի կարող անողոք քննչից աղատուել: սեղանի վերայ վառուած մոմերի քանակը նորէն աւելացրեց և ին: Ցորենի: գարու դրամի ցուցակ ունէր: բայց պընդում էր որ չի ստացել և երբ «...» քննիչը սուտը բռնում էր: երեցփոխը ամօթից և սրտնեղութիւնից լալիս էր ու բղաւում: չէ՛: «... է: Եւ ինչ էլ չէր: Չայելով երեցփոխի հիւանդ վանքերին և քննչի զիջողութեանը ի մեծ զարմանս երեցփոխի (որ կարողացաւ բռնուիլ) դուրս եկաւ որ 112 բուրլի 30 կոպ. փող 2 սոմար 3 կոտ ցո-

րէն է գաղել: Այս եկեղեցիների տարեկան եկամտի պատկերն է:

Բայց շատ եկեղեցիներ տանեակ տարիների ընթացքում գողացուած արդիւնքներից զատ գումար են կազմել, փող են դիզել: Արովհետև երեցփոխը լիազօր տէր է համարում իրեն նոյն փողերի: ուստի շահեցնելու անունով բաժանում է իւր բարեկամների մէջ. յաղենալուց և յագեցնելուց յետոյ դուրս է գալիս պաշտօնից առանց ցրուածը ժողովելու և: առանց օրինաւոր վաւերաթղթեր ներկայացնելու յաջորդին: յաջորդ երեցփոխն էլ պարտք չի համարում նախորդի ցրուածը ժողովել և եթէ պահանջի նոյն իսկ, ո՞վ նրան կոպէկ կը տայ: չէ՛ որ նորանից չեն ստացել: Այս կերպ վարուում է և յաջորդը: որ շուտով իւր նման յետնորդի նախորդն է դառնում: և որոնց շարքի մէջ հայուում են եկեղեցու եկամուտները:

Այս պատկերն էլ ընդհանուր է: փոխանակ հաստ գէպքեր յիշելու: շատ գիւղերի անուններ կարող էինք տալ: ուր այդպիսի վարմունքը տարիներից ի վեր շարունակուում է: Բայց առ այժմ լրուում ենք, որպէս զի ով ականջ ունի լսելու: լսէ: Երբեմն էլ շատ ուշ գիւղացիները յայտնում են իշխանութեան. հոգեւոր իշխանութեանն են յանձնում մուրհակները կամ որևէ թուղթ որ դատաստանով առնուի: բայց յայտնի չի լինում նոցա թէ ի՞նչ պատճառով ուշանում է կարգադրութիւնը և գիւղացիք պատասխան չեն ստանում: Հոռոտի: Շահրիարի մուրհակները: ինչպէս իրենք գիւղացիքն են վկայում: կոնսիստորիա են մտել և ցայսօր լոյս չեն տեսել:

Անշուշտ ընթերցողի մտքով կանցնի թէ ինչո՞ւ քահանաները չեն հսկում երեցփոխների վերայ: նախ՝ չեն կարողանում: որովհետև գիւղերում մեզ համար անհասկանալի կերպով եկեղեցու լիազօր տէրը երեցփոխն է: պատահել է մեզ տեսնել, որ քահանան երեցփոխի զայրոյթը իւր վերայ շարժել է և պատարագելիս սեղանում վառելու բաւարար մտից զրկուել: անզօր է Քահանան երեցփոխի դէմ և այն պատճառով որ գիւղի տանուտերի հետ դաշնակից է երեցփոխը. եկեղեցական եկամուտների մէջ բաժին ունի տանուտէրը. եթէ այդ բաժինը չստանայ նա իւր ազդեցութեամբ կարգել է գիւղացոց եկեղեցուն նպաստ տալ, ապա ուրեմն կողմնակի կերպով կը վնասի երեցփոխի շահերին: Այս պատճառով տանուտերի «սիրտ շահելը» երեցփոխի համար անհրաժեշտ կարիք է: Մենք ահանատես ենք եղել մի քանի տարի յառաջ նոյն իսկ այսպիսի դէպքի: որ տանուտէրն ու երեցփոխը քահանայի վերայ զայրանալով եկեղեցու դու-

որ փակել են քահանայի առաջ և օրերով ժամասացութիւնը դադարել է. երբեմն էլ տանուտէրը իւր հրամանները ճառի ձևով եկեղեցումն է տուել փողովդղին: Շատ հասկանալի է թէ որքան տգեղ և վտանգաւոր է տանուտէրի միջամտութիւնը եկեղեցու գործերում:

Բայց ինչո՞ւ չի բողոքում քահանայն այս վիճակի դէմ: որովհետև իրենից է վախենում...

Գիւղերում քահանան, երեցփոխը, տանուտէրը գիւղացոց շարժիչ մեքենան են, Շատ տեղ այս մարդիկ են դպրոցի անունն ու գաղափար հալածողը և հասկանալի է թէ ինչու:

Արդարև կան քահանաներ, որոնք աշխատել են և յաջողել դպրոց բանալ, բայց նորա էլ իրենց վարմունքով ցոյց են տալիս թէ դպրոցի շահով չեն ոգևորուել: Շիրակի Ա. գիւղում քահանան դպրոց է հիմնել, գիւղի եկեղեցին իւր գրամական և հողային եկամուտներով նպաստում է դպրոցին. քահանան սովոր է բացի այս աղբիւրներից շարունակ հանգանակութիւն անել դպրոցի անունով ոչ միայն փող, այլ և ուրիշ պիտոյքներ, Աշակերտներից ստանում է բաւական նշանաւոր թոշակագրամ: դպրոցի յառաջադիմութիւնն էլ յառաջադիմութեան չի նմանում որովհետև այնպիսի ուսուցիչներ է վարձում, որոնք ուրախութեամբ նոյն իսկ տարեկան 80 ռուբլիով չիմացած կրօն ու հայոց լեզուն աւանդելու յօժարութիւն ունին: Գպրոցի հաշիւ երբէք չի տալիս գիւղացոց, Այս վարմունքով պարզ ապացուցանում է յիշեալ քահանան թէ ապրելու մի լաւ ճանապարհ ունի և այդ իւր բարեգործութեան արդիւնք դպրոցն է:

Նոյն գաւառի Հ. գիւղի քահանան երկար ժամանակ գործակալ է եղել. վերջապէս բարձրագոյն իշխանութիւնը նկատում է գործակալի ջերմեռանդութիւնը և հեռացնում գործակալութիւնից. որովհետև սովորութիւնից յետ կենալն էլ դժուար բան է, քահանան ձգտում է գործակալութիւնը նորից ձեռք բերել դպրոցի անունով:

Մինչև 1893 թ. նոյն գիւղը դպրոց ունէր, բայց քահանան ուսուցչի ոռճիկը կտրելով ու ներդացնելով փակցրել է բոլորովին և 1894 թ. զբրկուել է դպրոցն ուսուցիչներից: Գպրոցը փակելուց յետոյ քահանայի որդին մտածում է ասպարէզը փոխել և ուսուցիչ լինել. գիմում է Աւհափառ Հայրապետին և իւր բոլոր մտաւոր զօրութիւնը նորին Սրբութեան ոտքերի տակը դնելով յայտնում է թէ մի գեղեցիկ շէնք է շինել իւր սեպհական ծախքով՝ նուիրել է եկեղեցուն և այժմ ցանկանում է օրինորդաց դպրոց դարձնել և ձրիապէս իրեն կնոջ հետ մեկտեղ դասաւանդել մշտապէս, Աւհափառ Հայ-

րապետը սրբատառ կոնդակով օրհնում է երիտասարդի անձնուիրական ցանկութիւնը և թոյլ է տալիս դպրոց բանալու: հրաման անելով Գեր. Առաջնորդին, Առաջին յաջողութիւնից յետոյ մեր արհեստէր գիմում է «Բարեգործական ընկերութեան» և տարեկան 300 ռուբլի է խնդրում յօգուտ իւր էւսման: Ինչո՞ւ է լսուում է միևնոյն ժամանակ, որ խնամակալի հայրը ջանքեր է անում շրջակայ գիւղերի գործակալութեան Եջմիածնապատկան եկամտից մասն ստանալ դպրոցին, Այսպէս խնամակալութեան ծրագրով պիտի ստացուէր 300 ռուբլի բարեգործական ընկերութիւնից, մօտ 300 էլ հաշուէնք Եջմիածնապատկան արդիւնքից, 200 ռուբլի թոշակներից, 300 ռուբլի եկեղեցուց, նորա շէնքերից, ընդամէնն մօտաւորապէս 1100 ռուբլի, որ շատ չէ իրրև բարեգործութեան գին, Հանգուցեալ Սրբազան առաջնորդը իւր հեռատեսութեամբ հասկանալով գործի էութիւնը Թեմական Տեսչին հրամայում է գնալ Հ. գիւղը և նոր բացուած դպրոցի մասին տեղեկագրել, Տեսուչը գնում է, բացուում է գործը. ոչ դպրոցի շէնք, ոչ նուիրարբութիւն, ոչ դպրոցի հօտ, ամէն ինչ կեղծիք:

Շատերից դարձեալ մի օրինակ. Վարուց վիճակի Բ-չ գիւղի հարուստ քահանան իւր ձեռքն է ամփոփել եկեղեցու բոլոր արդիւնքն ու հաշիւները 16 տարի շարունակ. երկար ժամանակ հաշիւ շնորհայացնելով վերջապէս գրգռում է գիւղացոց իւր դէմ: Արդար դատաստանից ազատուելու համար դպրոցի շէնք է շինում լուում են գիւղացիք, ապահովում է քահանան. վարձում է էւսման ուսուցիչներ և չբաւականանալով իւր մշտական եկամտով՝ ապրելու մի խելօք հնար էլ գտնում է և ահա ինչպէս, Գպրոցի նախահաշիւը տեսնելիս թեմական Տեսուչը հարցնում է ուսուցչին. «Պ. Գ., երկու ուսուցիչներիդ նշանակուած է 410 ռուբլի, երկրորդ ուսուցիչը ստանում է 80 ռուբլի, ուրեմն դուք էլ ստանում էք 330 ռուբլի». լուում է ուսուցիչը, կարմրում և վերջապէս խոստովանում. «Հայր Տեսուչ, ամէն տարի տէրտէրը ուսուցիչ վարձելիս նախահաշուի մէջ 100 ռուբլի աւելի է դրում և ուսուցչից նախապէս նորա ստացականն առնում: նախահաշուի մէջ յիշուած 330 ռուբլուց իսկապէս ես ստանում եմ 230 ռ., իսկ 100-ը տէրտէրն է վերցնում»: Հարցնում է տեսուչը քահանային, բացատրութիւն է պահանջում և քահանան յանձն առնելով իւր արարքը Զաքարիայի օրինակով լուում է, Գիտեն այս բանը գիւղացիք, հոգաբարձուները, բայց ի՞նչ կարող են անել, քահանան հարուստ պարտապանները շատ, որդին գիւղի արհեստ, Մենք ընդհատում ենք այս տեսակ փաստերի շարքը:

Անշուշտ՝ ընթերցողի մտքով մի հարց անցաւ ինչո՞ւ իշխանաւորները չեն հսկում այս ապօրինութեանց վերայ, Եկեղեցիների արդեանց մերձաւոր իշխանաւորներն են գործակալ քահանաները, իւրաքանչիւրը իւր գաւառում, Գործակալ քահանաներից շատերը բարձր չեն ստորագրեալ քահանաներից, Գործակալը շրջում է երբեմն իւր գիւղերը, հաշիւներ է տեսնում, քահանաների ղեղձմանց մասին փոքր ինչ շուշու սարքում բարձրագոյն իշխանութեամբ սպառնում, բայց ի վերջոյ մի նշանակաւ մէքի հետ հաշտուած, ամէնքից գոհ «ուրախ դիմօք, բերկրեալ սրտի» յետ է դառնում տուն և իշխանութեանը գրում «փառք բարերարին Աստուծոյ ամենեքեան եկեղեցիք և քահանայք գործակալութեան մերոյ ի բարեոք գրութեան գտանին կատարելով զսրբազան պարտիս իւրեանց», Անցնում է մի կամ երկու տարի, աղքատիկ գործակալը գիւղի հարուստն է դառնում... մի քանի այցելութիւն ևս իւր հօտին, և ահա շնորհակալութեան գրերով բեռնաւորուած գնում է քաղաք իւր ծառայութեանց վարձն ստանալու:

Ս. գաւառի ժողովուրդը վկայում է, որ իրենց քահանաներից մէկը նախքան գործակալութիւնը աղքատ թշուառի մէկն էր, մինչդեռ այժմ գաւառի հարուստներից է: Նոյն գաւառացիներից ոմանք յայտնել են թէ նա նորընծայ քահանաներից իւրաքանչիւրից 200 ռուբլի փող է ստացել ձեմարանի անունով նախքան ձեռնադրութիւնը և այդ փողերը իւր գրպանն են մտել:

Վերջապէս հասնում է և ժամանակը, երբ բարձրագոյն իշխանութիւնը եկեղեցիների և քահանաների վիճակը քննող և տեղեկագրող մարդ է նշանակում: Բացուում է վարագոյրը, ներուում են յանցաւոր քահանաներն ու գործակալները, կարծես պատիւն ու դրամն անզօրացել են քննչի աչքը կապելու և այդ վտանգից ազատուելու համար ստիպուում են օրհասական կոիւ տալ քննչի հետ, բողոք բողոքի ետևից ուղարկում են սինօզ և բարձրագոյն ատեան քննչի վերայ որ շնա անպատուեց իրենց, հայհոյեց, ծեծեց, չհաւանեց իրենց բնակարանին և կերակուրին» և մի շարք այսպիսի անլուր և իրենց անձին վայել զրպարտանքներ շարելուց յետոյ խնդրում են պաշտպանել իրենց «նշանակաւ վերականգնել իրենց պատիւը, գոնէ իսէր այն պարզեաների, որ ստացել են «ի վարձ իրենց ծառայութեան»:

Այս համառօտ նկարագրից պարզ է թէ ով է տուժողը, եկեղեցին և դպրոցը միշտ և միշտ:

Եկեղեցական արդիւնքները կանոնաւոր վիճակի մէջ պահելու և գործակալների ու քահանա-

ների գործերը աչքի անցնելու համար Վեհ. Հայրապետը մտադիր է «Եկեղեցական գրամոց» մի տեսչութիւն հաստատել, սակայն ս.բ.ն յարմարաւոր պաշտօնեայք:

Գպրոցական եկամուտների առաջին աղբիւրի մասին խօսելուց յետոյ երկար չենք կանգնիլ թուշակագրամների և կամաւոր նուէրների վերայ, այսքան միայն որ թողակներով դպրոց պահել չի լինիլ որովհետև տարեկան միջին թուով 5 ռուբլի տալ չեն կարող ծնողները, և ապա ինչ անեն աղքատների որդիք, իսկ մի գիւղում միջին թուով 50 աշակերտ կարող է լինել աղքատ և հարուստ, Կամաւոր նուէրների մասին խօսելն անգամ աւելորդ է, այնքան չնչին են նոքա:

Ս.

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԽՄԵԼԵՔԻ ԹԵՄ.

Թիֆլիզի շրջակայքում գտնուող Թելէթ ուխտատեղու վանհայր արժանապատիւ Յովսէփ վ. Խարաղեանը ապրիլի 8 ին զոհ է եղել մի գաղանական շարագործութեան, Հանգուցեալի ծառան յափշտակութեան նպատակով սպանել է Յովսէփ վարդապետին և անյայտացել, Արժ. Յովսէփ վ. Մայր Աթոռիս հնագոյն միաբաններիցն էր և զանազան տեղերում վարչական պաշտօններ է վարել և օրինակ է եղել միշտ հնադանութեան և կարգապահութեան, Եւր պաշտօնավայրի ամսյութեան զոհ գնացած արժանաւոր վանականի հոգին հանգուցէ՛ Տէր ի լոյս երեսաց իւրոց:

Սրբազան թեմակալ առաջնորդի կարգադրութեամբ Թիֆլիզի հոգևոր ատենի նախանդամ արժ. Համազասպ վարդապետն է կատարել հանգուցեալի թաղումը:

ԱՍՏԻՆԱՆԻ ԹԵՄ.

Հայրապետական կոնդակով թեմական կառավարիչ նշանակուած Գեոր. Խորէն եպիսկոպոսն հասել է արդէն իւր պաշտօնատեղին:

ՀՈՒՇԻՈՅ ԹԵՄ.

Հուշոյ թեմի ժամանակաւոր կառավարիչ Արժանապատիւ Գարեգին վարդապետն ապրիլի 7-ին ստացել է Հայրապետական կոնդակ և արդէն ձեռնարկել է իւր պաշտաման գործերին:

ՀԱՄԵԼԻՈՒ ԹԵՄ.

Գերապատիւ Մակար եպիսկոպոս Բարսուզարեան, որ Համախու թեմի ժամանակաւոր կառավարիչ էր նշանակուած Հայրապետական կոնդակով այժմ Կայսերական հաստատութեամբ Համախու թեմի առաջնորդ է նշանակուած ի տեղի Ամենապատիւ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանի, որ հիւանդութեան պատճառով արդէն հրաժարուել էր այդ թեմից:

Ամենապատիւ Մեսրոպ եպիսկոպոսն անցեալ տարի Թիֆլիզում բժշկական խնամքներ վայելելով ապաքինուելուց յետոյ Մայր Աթոռս էր վերադարձել և այժմ վարում է Հայրապետական Տեղակալի պաշտօնը:

2. ՏԱՃԿԱԼԱՅԹ.

Ուրախութեամբ տեղեկացանք որ Ամեն Իգ- միրդեան Պատրիարքը առաջնորդական անդապահներ նշանակել է հետևեալ միճակաց համար որք երկար ժամանակէ ի վեր առանց Առաջնորդի էին.

Ամասիա - Մարզուան վիճ. համ. Արժ. Յակոբ վարդ. Աշոտ	Յովհաննէս . Մաժակոնի
Քալդէ	Յակոբ . Երզնկայեան
Նորիսի	Յուսիկ . Նսմբեան
Նորիսի	Վահան . Յակոբեան
Եապիւն-Գարահասարի .	Ամբրոսիոս . Ռուբինեան
Չարսանձագի .	Եղիշ . Երանազարեան
Զնէլաճագի .	Աւետիս . Մինասեան

Յանկալի է որ յիշեալ Արժ. Հարք սիրով ընդունին իրենց տրուած այս պաշտօններն և գնալով իրենց պաշտօնատեղիները գործեն յօգուտ ժողովրդեան որք ներկայումս աւելի կարօտ է բանիբուն և պարտաճանաչ հովիւների:

Տիրապետներու կարևոր թեմն ևս թափուր է առաջնորդից յուսանք որ Ս. Պատրիարքը կարող մի եկեղեցական կը նշանակէ այդտեղ ի միսիթարու- թիւն ժողովրդեան:

Ամեն Պատրիարքի հրամանաւ Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոս Յովհաննիսեան իմառոյ Սիս կուղևորի Կիլիկիոյ կաթուղիկոսի ընտրութիւնը կատարել տալու: Թէ ինչպիսի եղանակաւ պիտի կատարուի այս ընտրութիւն յայտնի չէ առ այժմ: սակայն Իգմիրդեան Ս. Պատրիարքի նախնաձայնը- րութիւնը եկեղեցական օրինաց մասին մեզ կատարեալ հաւատարմ է որ այս ընտրութեան համաձայն Հայաստ. եկեղ. կանոններին կը կատարուին:

Գոհութեամբ սրտի իմացանք որ քրտորեալ և բանտարկեալ եկեղեցականաց մեծագոյն մասն ազատուելով Կ. Պօլիս բերուել և Ս. Պատրիարքին յանձնուել են որք իւրաքանչիւրին առ ժամեայ ինչ ինչ պաշտօններ տուել է. նոցա թուում կան 4 եպիսկոպոս — Արապկիրի առաջնորդ Եղնիկ եպիսկոպոս և Կիլիկիոյ միարաններից, Հալեպի առաջնորդ Կարապետ, Ատանայի առաջնորդ Մկրտիչ և երբեմն Մարաշի առաջնորդ Գաղանձեան Յովհաննէս եպիսկոպոսներն: 4 վարդապետներ և 6 քահանայք:

Յուսալի է որ այս օրերս ևս լսենք մնացեալ բանտարկելոց արձակուիլն յորս են ի մասնաւորի Զէյթունի նիկողայոս եպիսկոպոսն և Մշոյ Առաջնորդ Ներսէս ծ. վարդապետ Խարախանեանն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅՈՒԿԱՆ.

1. ԲՐՈՍՏՈՍ ՅԱՐՅԱՆ	Կ. Վարդ.	109
2. ԳՐԻԳՐ ՍՔԱՆԶԵԼ. (Յաւելուած Ա.)	Կ. Վ.	111
3. ՄԱՏԵՆՄՈՍՄԱԿԱՆ Ապողոսիոս Կ. Վարդ:	115
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲՐՈՆՊՈՆ	Ն. Բարամեան	115

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ. — ՊԱՏՄՈՒԿԱՆ.

5. ՄԻ ՀԱՏՈՒՄԹ Մ. ԽՈՐ. ՊԱՄՄ.	(Յաւելուած Բ.)	Կ Կոստանեան	118
6. ՄԻ ՀԱՏՈՒՄԹ Մ. ԽՈ. ՊԱՄՄ.	ՎՐԱՅ ԴԱՐՁԻ ՄԱՍԻ. (Յաւել. Գ.)	Կ Վ.	121

7. ՌԱՏՈՒԵՑԱԻ ԳԱՐՈՒՆ. (Բանաստ.)	Թ. Յովհաննիսեան	125
8. ԱՌԱԾՆԵՐ ՎԱՆԱՅ ՌԱՐԱՌՈՂ. Ս. Հայկունի		
9. ՀԻՆ ՀԱՅ ԵՐԳՂՉՆԵՐ	Ն. Բարամեան	121

ԲԱՆԱԿԱՆԱԿԱՆ. — ՄԱՆԱԿԱՎԱՐԺԱԿԱՆ.

10. ՆՈՐ ՆԱՍԻՔ. ՌՍՈՒՄՍ. ԳՐՈՒՐ Ե. Ե.		151
11. ՄԱՆՐԱՍՈՒՐՔ		151

ԱԶԻՍԻՆ.

12. ՀՐԱԽԵՐ		153
15. ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ՄԱՅՐ ԱՌՈՒ.		156
51. ՌՈՒՄԱՅԱՅՔ		

1. Երեւանի թեմ Դպրոցական խնդ. (Թղթակցութիւն)
 2. Վրաստանի եւ իմերեթի թեմ
 3. Ատրախանի թեմ
 4. Եուզոյ թեմ
 5. Եամախու թեմ
 6. ՏԱՃԿԱՅԹ.
- ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՆԱՄԱՅԱՏՈՒՓ
ՅԱԽՆՈՒՄԹ
ՄԱՏԵՆՄՈՍՈՒԹՈՒՆ
ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆՈՐԱԿԱՏՈՒՓ

ՆՈՐ—ՆԱԽԻՋԵՒԵՆ. Ա. 2 օր արեւմտին: 2 օր ուղարկած թարգմանութիւնը «Մահուան երեք տեսակը» — կարող չէ լոյս տեսնել:

ՎԻԵՆՆԱՅ. Հանգլս Ա հարկաւ խմբագրութեանը Կարգադրութիւն արկնք:

ՂՐՁՐԼ—ԱՐՎԱՏ. Պ. Շողիմեանն: 2 օր փողը հետ ուղարկեցին որովհետև օրացոյցները արդէն սպառուել են: Խնդրում ենք աղաւ կացուցանել խմբագրութիւնն նրան չվերարեւել յանձնարարութիւններից: Տպարանին վերաբերեալ գործերով պէտք է դիմել Տպարանական վարչութեանը:

ԱՍՏՐԵԼԵՆ. Ո սուրբ պ. Ա. Գ. Գլավանին: Թէպէտ և դա խմբագրութեանս գործը չէ այնու ամենայնիւ կատարեցինք:

2 ԵՄ ԳԻՒՂ. Ե յիշե բաննայ Գ սիմանսեանին 2 օր նամակը և նամակագրօջմերը ստացանք. ստիպուած ենք նոյն պատասխանը տալ ինչ որ և պ. Գեղամեանին:

ԹԻՖԼԻՍ. Պ. Գ սիմ Տ. ր Գ սիմանին: 2 օր թարգմանութիւնը ստացանք:

ԹԻՖԼԻՍ. արժ. Էմ բան. Ն սպարիանին: 2 օր աշխատութիւնը նախկին խմբագրութիւնից չենք ըստացել: ուստի ոչինչ էլ չենք կարող 2 օր պատասխանել:

Գանդասներով մեզ պիտիյնտինս: Հատերը դիմում են մեզ պեղատ և դժգոհութիւն յայտնելով որ Արարատի այս կամ այն համարը չեն ստացել: Պարտք ենք համարում յայտնել որ մեզ խմբագրութեանս անդամներին յանձնուած է միմայն խմբագրելու գործը: Իսկ երապիլիցեան (քաժանորդներին ուղարկելու գործը) յանձնուած է «Տպարանական Վարչութեանը»: որին և խնդրում ենք դիմել:

Մեր աշխատակիցներին: 2 սպուելու յօդուածները մնում են խմբագրատանը և վերագրածուում են միմայն այն գէպրում: Եթէ հեղինակը նամակագրօջներ ուղարկէ: